

ՎԻՎՏՈՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՈՒԹ ԻՄԱՍՏՈՒՆՆԵՐԸ

(պոեմ)

Հունական յոթ իմաստունների մասին ավանդապատումն է ստեղծագործության հենքը, որի այս մշակումը մի կարևոր «սխալ է շտկում»՝ ավանդական յոթը դարձնելով ութ՝ իմաստուն ճանաչելով նաև յոթ իմաստուններին իմաստուն կոչող թագավորին, առավել ընդգծելով ավանդապատման իմաստասիրական կողմը: Եթե իմաստուն են ամենագետի թագից հրաժարվողները, առավել ևս իմաստուն է թագն արժանիին տալ կամեցող արքան:

Հեղինակ

«Բավական է ապրենք
հույն ու հռոմեական խոր անցյալում»:

Գիյոմ Ապոլիներ

- Մեռավ արքան, կեցցե՛ արքան,-լաց եղան հիմար իմաստունները: Յոթ նախարարները յոթնօրյա ժողով գումարեցին՝ իրենցից մեկին թագադրելու հույսով ու ձախողվեցին, քանզի ոչ մեկը չէր ուզում թագը զիջել մյուսին: Նրանցից մեկը, պատուհանից դուրս նայելով, տեսավ պատանի ձկնորսին:

- Կանչենք այս տղային, նա անշահախնդիր է, միշտ իր բախտին ու Աստծուն ապավինած, թող գա ու մեզանից որին ընտրի, նա էլ թագադրվի արքա:

Յոթով մի խոսքի եկած՝ պատուհանից վերև կանչեցին տղային:

Պատանին պալատ մտավ, ուռկանը դրեց դռան հետևում ու կանգնեց յոթ թագատենչների դեմ՝ տազնապելով, որ սա է գուցե իր գիշերվա երազը, որի մեջ ինքը ամբողջ օրը չկարողացավ ոչ մի ձուկ բռնել:

- Առա՛ջ արի, ձկնորս տղա,-ասաց նրանցից մեկը,-ահա եռոտանուն դրված թագը, վերցրու և մեզանից որի գլխին դրեցիր, նա էլ կլինի մեր երկրի թագավորը:

- Բան չունեմ ասելու,-պատասխանեց տղան՝ ուսերը քաշելով,-բայց դուք յոթով մի ստորագրական թուղթ սովեք, որ իմ ընտրության դեմ չեք առարկելու:

Յոթ թագատենչները կազմեցին պահանջված թուղթը, սովեցին նրան ու կանգնեցին իրար կողքի՝ ամեն մեկը սպասելով, որ ուր որ է թագն իր գլխին է դրվելու:

Պատանին անկաշկանդ քայլերով մոտեցավ եռոտանուն, վերցրեց թագը, հերթով նայեց յոթ նախարարներին, օղու մ խաղացրեց իր գլխից վերև պահած թագն ու դրեց... իր գլխին:

- Թագադրվեց արքան, կեցցե՛ արքան,- ծիծաղեցին իմաստուն հիմարները:



Մթնշաղում Միներվայիս¹՝ աստեղնապահ.
ա՛յ, տեսնում եմ ութ աստղերով մի աստղաբույլ,
աստղերը ութ՝ խմբված կույտ մի լուսաձույլ,
թագի տեսքով ճառագում են սերտ ու անմահ:
Միներվայի թագն է հեռու աստղաբույլն այն,
աստղերամը՝ հեքիաթով իր գողտրիկ ու ճոխ,
Աստված գիտի, թե ինչ տենչի կանչով ողող՝
նորից ուզեց հյուսել հեքիաթն հոգիս ունայն:



Հունաց ծովափ: Ճեմող երկու պոլսաերեց
հանդիպեցին ուռկան գցող ձկնորսին ծեր,
ու մեկն ասաց. «Ա՛ն մի ոսկի, ձկնորս ախպեր,
երեք անգամ գցի՛ր... Ինչ որ բախտս բերեց...»:
Ձկնորսն ուռկանը ծով գցեց հրճվանքով տաք,
երեցն իր բախտն ուզեց՝ կողքից հուզում վառած:
Փոքր անց ուռկանն էլավ ջրից՝ իր հետ առած
լալու պես բան... մի փերթ ծիծա՛ղ ձկան տեղակ:
Երկրորդ անգամ գցեց ձկնորսը ցանցը իր,
ծիծաղելիք. ուռկանի մեջ... լա՛ց էր մի ափ:
Ձկնորսն էլի ջուրը նետեց ուռկանն անխաբ,
«Տերն եմ», - ասաց երեցն էլի՝ հույսը հոգում:
Քաշում ձկնորսն ուռկանը իր կասկած շոգում,
ձգում է, ու հոգում շփոթումը զնգաց,
չի հասկանում, ինչ է արդյոք ցանցը ընկած,
հանեց ուռկանն ու ի՛նչ... մեջը՝ լուսեղ մի թագ:
Ելավ թագը խորհրդով փակ ու իր հետ՝ վեճ,
ոսկյա մի թագ՝ վեճ ու կովի տիղմը իր մեջ,

նսկյա մի թագ՝ զույգ լրջության առջև կատակ...
Երեցն ասաց. «Թագը իմն է, ինչ էլ լինի,
մեր պայմանով ես եմ տերը դուրս բերածի»:
Ձկնորսը՝ չէ՛, քաշիր ձեռքդ ու հեռացիր,
ձուկ ես ասել, զուր ես թագին պարզում դու ձեռ:
Բորբոքված հար, չգտած ճար, թագը առած,
շտապեցին արքայական դատի առաջ:



Արքան ինքն էլ մի պահ հրապուրված թագով,
լեզուն այն ում էլ տա, միտքն իրեն է պահում,
ինքն է թագին արժան, թագը՝ իրեն, բա ո՞ւմ,
թագն իր շքեղ տեսք ու շողով՝ աչքեր ծակող:
Նա ձկնորսին ու երեցին կաշառելով
ուղարկեց տուն ապա կարդաց թագի կողին.
«ՄԻՆԵՐԿԱՅԻՑ՝ ԱՄԵՆ ԻՆՉԸ ԻՄԱՑՈՂԻՆ»,
կարդաց նորից ու մտմտաց՝ ես եմ, էլ ո՞վ,
բայց չգիտես, թե ինչ ձայնով զսպած իրեն,
հանկարծ չուզեց նա այդ թագը երբեք տիրել,
առկայծ մարած իր մեջ հազար իղձ ու հուզում.
«Իմ ամենախիմաստունին թագն այս՝ նվեր», -
խորհեց արքան ու վեզիրին կանչեց իր մոտ.
«Կանչիր պալատ իմաստուններին իմ յոթ,
թող այս թագին արժանին ինքը դառնա տեր»:
Շուտով խոնջյալ խորագետներին իրար հետ
տեսավ արքան թագի առջև, պալատում իր:
Թագն ակնարկեց եռոտանուն ու սիրալիր
ձայնով ասաց. «Ամենագետ, թագադրվի՛ր»:
Եվ իմաստասերները յոթ, կանգնած ամպոտ
հայացքներով նայում են մեկ թագին շքեղ,
մեկ սսկվում կասկածների կածանում նեղ,
վերցնում-դնում, սիրտ չեն անում քայլելու մոտ:
Կրկնեց արքան, սակայն յոթն էլ անթարթ ու լուռ:
Ու ինքն ընտրեց. «Արի, Թալես¹, և դու առ այս
թագը, որին դու ես արժան ամենից շուտ,
որ կաճառով նրա հալես ստվեր ու մութ»:

Գոցեց Թալեսն այքերն հոգնած ու դողդոջուն
ձեռքն արեց դեմ. «Արքա՛, արքա՛, ինձնից անցի՛ր,
վստահումդ շատ է շոայլ, գաղտնյաց անծիր
ծովից քացածս՝ մի կաթիլ: Թագն ո՛ւր, ես ո՛ւր...
Աթենացոց կարծիքը ի՞նչ կշիռ ունի,
որ ինձ օծել են տիտղոսով իմաստունի...
Իրենց անվերջ հարցին, թե ես ինչու համառ
չեմ նշանվում, մեկն եմ ասում՝ քախտս փակեմ,
այս դառն ու սին աշխարհում ի՞նչ շարունակեմ
ժառանգներիս տեսքով կյանքս խեղճ ու թշվառ:
Հորջորում են շատերը ինձ՝ իմաստնապետ
և այն առթիվ, որ համոզված այս եմ ասում՝
Կյանքն ու Մահը նույնն են, ինձ ու ձեզ եմ ասում:-
Զուր չես մեռնում,-ինդմնդում է ամբոխն ինձ հետ:
Ծիծաղում եմ՝ է՛հ, ի՞նչ մեռնեմ, երբ ակամա
միևնույն քանն են աշխարհում թե՛ Կյանք, թե՛ Մահ:
Հազար պատասխաններ իմ մեջ, բայց առավել
շատ հարց ունեմ, թեպետ գիտեմ՝ ջուրն է ամեն
գոյի սկիզբն, ու խրատը իմ սա է մեն՝
խելքը՝ աղջուր, խմողն է էլի ծարավել:
Ես եմ տարվան երեք հարյուր վաթսունհինգ օր
ջոկել, հաշվել, գտել Փոքր Արջը երկնում,
բայց այս թագով այդ ինչպե՞ս ես դու ինձ կնքում,
երբ ԳԻՏԵՄԻՍ դեմ՝ ՉԳԻՏԵՄՆԵՐ բյուրավոր:
Պատգամ ունեմ՝ ԱՄԵՆՈՒՐԵՔ ՉԱՓԴ ԳՏԻՐ,
այդքանից ետ, դե՛, այս թագը իմ գլխին դիր:
Ցանկության դեմ վախ կա իմ մեջ. ես սուկալի
վախենում եմ, այդ թագի տակ լեզուս լավի,
թագով նվաստ մտքիս հրին անձրև փովի:
Չե՛, այս թագը իմ աչքի դեմ Վախով է լի:
Վախի ճեղքից գուցե տեսնեմ անտեսը ես,
բայց ճար չունեմ ու իմ Վախին ես շատ եմ հեզ»:



Եռոտանուն մնաց թագը, ու Մուլնի¹
կողմը դարձավ. «Աթենային թե կսիրես,

գուցե թագն այս ծովից պեղվել է քեզ համար,
ա՛ն և կրի՛ր, շնորհյալդ Ապոլլոնի»:
Սոլոնն ասաց. «Սողոմոնն² էր այդ թագին տեր
ու ճնշվել, որ իր դեմ էլ կան փակ հարցեր,-
ու Սոլոնը շիկնեց անաս իր տագնապից:-
«Այս աշխարհում, համենայնդեպս, երեք բան,-
մտորում է Սողոմոնն,-ինձ խելքահանում,
երեք գաղտնիքներից ես բան չեմ հասկանում.
մեկը կինն է, որի դեմ հանց երեխան ես անգետ եմ,
երկրորդն ասեմ՝ վազող ձիու զկրտոցը խորհուրդ է
լիք,

մեկն էլ մեղվի մեղմիկ արվեստն է ինձ գաղտնիք»:-
Ասաց, շինեց ապակեկող մի մեղվատուն
ու դարանից աչքը հառեց մեծ խորհրդին,
բայց ծեփեցին մոմով ներսից, ու նոր խրթին
իրենց գործին դարձան մեղուներն եռանդուն:
Հուսախաբվեց Ժողովողը՝ հարցը շուրթին:
Մինչ կդառնար մյուս երկու գաղտնյացն իր մեծ,
կին-ակնատով խարդավանքի ծուղակ քաշվեց:



...Տոն: Արևելք ու Արևմուտք տրված տոնին:
Ծննդյան օրն է թագուհու: Երուսաղեմ
քաղաքն իրեն տոնի հրճվանքում է թաղել:
Տոնից առաջ կինը ասաց Սողոմոնին.
«Գլուխ պիտի տան բոլորը իմ դեմ այսօր»:
«Ամենքը, բայց ոչ երբեք ես: Անկարելի
բան է, քանզի թագն է գլխիս Միներվայի:
Մեղսագործում. ձե՞ռք եմ քաշել ես իմ գլխից,
որ գլուխ տամ ու թագը իմ կրեմ էլի»:
Բայց թագուհին. «Օ՛,-նվնվաց,-գաղտնյաց ներքո
որ բոլորից մեր խորհուրդը մնա անտես,
քո նժույգով երբ որ մտնես մրցման հանդես,
իմ տոնական գահի առջև գալուդ երբ քո
ձեռքի մտրակը վար գցես ու կռանաս

այն վերցնելու, կհասկանամ ամեն ինչ պարզ»:
Ծփաց տոնը ծննդաներով: Վերջում՝ ձիերթ:
Ճոխ շքերթն է անցում գահի առջևից ու
գլուխները մինչև գետին են խոնարհում:
Ամենից ետ Սողոմոնին շնորհվեց հերթ:
Իմաստունն է՝ իր նժույգով, գահի հանդեպ,
ու մտրակն իր ձեռքից դիտմամբ գետին զցեց...
Միներվայի բուն հրկիզեց տեսիլ հապճեպ,
խլեց նրա գլխից ոսկեշող թագը իր,
երբ վերցնելու համար նա վար կռացավ հենց:
Որսկանը՝ որս, խեղճ Ժողովող իմաստնամեծ,
որ սթափված գետին զարկեց իր թևի տակ
պահված իմաստնության մատյանը իր անհուն,
ու պատռված գիրքը՝ փերթ-փերթ ավար քամուն,
ծվեն-ծվեն փովեց աշխարհով բովանդակ:
Եվ ինքը, որ իմաստնապետ էր տիրակոչ,
պարտված մնաց իր մեծ հարցի դռան դեմ գոց:
Թագն էտ առած Սողոմոնից տված տանուլ,
Միներվայի Բուն այն նետեց խորքը ծովի,
ու հիմա այն նոր կատակի խաղով թովիչ
հրամցվում է ինձ՝ դրված եռոտանուն:
Գիտեմ, շատերն են հիացել խոսքով իմ այս.
ԶՄԵՌԱԾԻՆ ԴԵՌ ՄԻ՝ ԿՈՉԵՔ ԴՈՒՔ ԵՐՋԱՆԻԿ,
գալիք պահերը՝ նոր ցավի ակնկալիք:
Կռահում եմ՝ ինձնից հետո կգան օրեր,
երջանիկները՝ կորցրած հրճվանքն ի չիք.
«Օ՛, Սոլոն, օ՛ ...» հիշեն պիտի հոգոցով լիք,
բայց ի՞նչ իմաստ՝ անցմանե ետ թե՛ փառք, թե՛ սեր:
Ավելի բան չեմ սիրել ես իմ Աթենքից,
բայց վտարեց տասը տարով Աթենքս ինձ:
Այդքանից ետ երգ-ասմունքով, խենթի դերում,
խաղիս մղմամբ բանակ-ամբոխն առած ինձ հետ
Սալամինան մագարացոց ձեռքից ես ետ
առա՝ հաշտեցնելով խրատներով ներհուն,
ամեն անգամ թույլ և ուժեղ, հարուստ, աղքատ,
բայց վերստին թագն իմ գլխից հեռու է շատ...
Ցանկություն՝ ւնը... Ինձ էլ գերում է, տիրանում,

բայց և ամեն անգամ իր ճիրանում
ՈՉԻՆՉ ՉԱՓԻՑ ԱՎԵԼ տողը ե՛ս եմ կապել,
տողը կապել, ու մնում է ինձ տազնապել,
թե որտեղից ով հորինեց և ի՛նչ է չափ,
հարց է կրկին, ու մնում եմ ես հուսախաբ:
Բայց ջանում եմ ես ինձ տիրել,
արծաթապաշտ-բարձրամտից սարսափում եմ
և այստեղ ինձ նաև Ամոթն է տիրակալ,
որ դարձնում է այս թագի հետ ինձ եղկելի,
և այդ Ամոթը կարող է խեղդել միշտ ինձ.
Ի՞նչ շահ ունեմ մահից առաջ իմ մահը լալ:
Իմ ամոթի ճեղքից գուցե տեսնեմ գաղտնյաց
ընդերքը ես, բայց չեմ դարձնի իմ երգը հաց:
Կարձ՝ տեր արքա, խելքս կերած հիմար հո չե՞մ,
որ ինձ իմ բերանով իմաստնապետ կոչեմ»:



«Հը՛, Պիտակոս¹, գուցե կարպետն հանես ջրից,
տիրես թագը, դուրս բերես ինձ դժվար Ծիրից»:
Պիտակոսը, ավում մորուքն իր ձնագույն,
մեղմ թլվատեց. «Փոխեմ մտքերս հնչյունի.
մի բան գիտեմ՝ ԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՓ ՉՈՒՆԻ՝
ԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՓ ՉՈՒՆԻ, սակայն
իրեն ուտող ցեցեր ծնող անձի հանգույն,
ես չեմ տեսնում՝ ինչն է միջուկն ազահության:
Թե չսանձեմ հիմա ազահ բաղձանքս մեծ,
դառնալու է տենչս բախտիս գլխակեր ցեց:
Գիտեմ, ներումն է ճիշտ պատիժը, առանձին
ընտրյալներ եմ ջոկում ես միշտ խաժամուժից,
բայց տկար եմ գատել երազանքը հուշից,
թեպետ ես եմ գրել Օրենսգիրքն առաջին:
Հարց են իմ դեմ՝ ի՞նչն է անշարժ, ի՞նչը՝ հոսուն,
հոգոցն իմ գոց՝ ի՞նչ է խորհել, ի՞նչ է լինել,
գոյն անսկիզբ, անվերջ, անքանդ մի Գորոյան² թել,
չեմ վերձանում՝ իմ շուրթերով ո՞վ է խոսում,
խորքն հասնելու ճամփին գուր են դաս և ուսում:

Ինչո՞վ բացեմ՝ ի՞նչ է հրճվանք ու ի՞նչ է ցավ,
 մտորում եմ, թե ինչն է ճիշտ և ինչը՝ սուտ,
 ողջը՝ ունայն, ամեն ինչ՝ սին ու վրան՝ մութ:
 Թե ամեն ինչը ամենուր՝ սուտ, ստի խութ,
 ուրեմն ինքը՝ սուտն է ճիշտ ու հարցն անսուտ,
 սուտն ինքը՝ ճիշտ, բա ի՞նչն է սուտ:
 Կյանքը Քծնանք է կամ Հեզնանք: Իմ հույսերով
 ես ուժեղ եմ, հաճույքն է իմ ինձ թուլացնող,
 որ Քծնանքի դուռն է հանում ինձ Հեզնանքից,
 ելք չեմ գտնում՝ ուսուցման մեջ էլ ուսելով,
 երբ աշակերտ եմ՝ ուսուցիչ լինելու հետ,
 էլ ո՞ւր եմ ես, և ո՞ւր անունն՝ իմաստնապետ:
 Ո՞րը կընտրեմ. ստրկատեր, թե՞ հենց ստրուկ,
 ոգում մարմնի վեճն է՝ խորքում երկնքից խոր,
 չունի ստրկատերն ստրուկը ինչ ունի,
 յոթը չափեմ, էլի խաբվեմ, ո՞րն եմ ընտրում:
 Այսքանից անց ասեմ, ձեզ հետ և ինձ ասեմ՝
 ասեմ՝ ուզում եմ, չեմ ուզում, դե, այդ ինչպե՞ս,
 երբ չգիտեմ՝ ո՞վ են ուզող-չուզողն անտես,
 ասեմ՝ չեմ ուզում, ուզում եմ, ես ի՞նչ ասեմ,
 էլ ի՞նչ ամենագետ եմ ես, ձեզ ի՞նչ ասեմ»...
 Հանգուցվում են միտքն ու լեզուն Պիտակոսի.
 «Հրաժարվեմ լեզվով, հոգով ցավեմ, ծխամ
 երկու դատարկ բառերի դեմ՝ ՃԻՇՏ ու ՄԽԱԼ:
 Պիտակոսիս էլ ո՞վ հուշի, թե ինչ խոսի:
 Խեղճ Պիտակոս, հեռու թագից Միներվայի,
 ծառան եմ իր, ոչ թե գահակալն իր գահի»:



Լուրջ ու կատակ խառնած արքան այս անանուն,
 թագ-պատիժի առջև մի պահ՝ ուրբաթախոս,
 շփոթ շրջվեց. «Դու ի՞նչ կասես, Կլեոբուլոս¹», -
 հարց հանելուկ, թե անելու ինչ է մնում:
 «Օ՛, Հռոդոս, օ՛, իմ Լինդոս, Կլեոբուլոս
 որդին ձեր հեզ նման վիրապ դեռ չէր ընկել,

ոչ մի հարցի առջև այսքան խեղճ չէր ծնկել,
ոչ մի անգամ շուրթն՝ այսպես գոց, լեզուն իր՝ գոս»:
Շարունակեց շեշտով իր ճոխ. «Ասեմ, արքա՛,
եփչել¹ եմ հար անցյալ, ներկա, գալիքն էլի՝
գաղտնյաց տակառ, լիքը՝ դատարկ, դատարկը՝ լի,
խառնված են ամեն իսկություն ու վարկած:
Օ՛, մարդ, ոտքդ կարպետիդ չափ զցի՛ր, հարկավ,
որ ծիծաղից չդառնաս դու ծիծաղելի:
Մանկութի վեր գիշերներով աստղերի դեմ
քննում եմ Անհեթեթը ու... ապարդյուն,
արթուն ունկիս չի էլ կաթում ոչ մի արդյունք,
առեղծվածաց դեմ՝ առեղծված... ե՛ս: Չգիտեմ՝
Անհեթեթով ի՞նչն է քնում, ի՞նչն է զարթնում:
Հարցականներն հարցումներիս որդունքը հանց,
հոգիս անթարթ խժռող դաժան ժխոր մի ջեռ,
լոկ այն դեպքում ես այդ թագին կպարզեմ ձեռ,
թե ամենագետ է նա, ով շատ ունի հարցեր»:



Խնդաց արքան. «Ծաղրուծանա՛կ... Խրախճանա՛ք...
Մղձավանջի սնդո՛ւկ... Տանջա՛նք եմ ես գահիս...
Վա՛յ ինձ, թագի ներքո խոնջյալ հեզ հիմարիս...
Պերիանդես², կողքի՛ թողեք ծաղր ու կատակ,
Պերիանդե՛ս... Գուցե հանգույցն այս դո՛ւ քանդես...»:
Ծեր գիտունը, որ խոհերի խորքում էր խոր,
խոժոռ շրջեց աչքերը իր պաղ ու խոշոր.
«Ի՞նչ կար, արքա՛, աշխարհում, երբ ես չկայի,
իմ ծնունդով արդյոք ի՞նչը տրվեց մահին,-
կնճռոտ դեմքը դեպի արքան շարժեց դանդաղ,-
կյանք ու աշխարհի համարել եմ ես պար ու խաղ,
ձգտել, տիրել ու հասել եմ իշխող գահի:
Փառաբանել եմ արհեստներ ու առևտուր,
Պոսեյդոնի¹ պատվին կազմակերպել խաղեր,
Արիոնի² հետ կապել շքեղ երգ ու տաղեր:
Երգիս միտքը, ավաղ, չկա, ամեն ինչ՝ ջուր:

Իմաստնությունը՝ տեր, բայց մեզ կիրքն է շարժում,
պատվիրանս՝ ամեն վայրկյան մահը հիշիր,
կենաց ամեն մի լրջություն կատակ հաշվիր,
մահն հիշելով՝ կյանքը մաքրելուն ես վարժվում:
Բախտն՝ հանելուկ: Գուցե արարքն ի չիք կիզվի:
Կորնթոսից Տոսպ ու անդին ես դուռ բացի,
կրետացին արդյոք ճիշտ է, թե՞ ստախոս,
երբ ստախոս է նա կոչում ողջ կրետացոց:
Թե գործը կա, մոռացյալն էլի կհիշվի:
Կատակ հո չե՞մ, որ վերհիշվեմ խեղճ կատակով՝
խելքն իմ եղած-չեղած թագի հետ փոխելով»:



Արքայի մեջ մեկ-մեկ ներքին հրճվանքը հիր
ճառագում էր, որ ձեռք չի պարզվում առ թագ,
իր գլուխն էր վերջում տեսնում թագի տակին,
բայց և հետո սսկվում էր՝ դու քեզ տիրի՛ր:
Շարունակեց. «Արդ խոսքը քոնն է, Բիանտե՛ս³»:
Լուռ Բիանտես, ծուռ Բիանտես՝ մի քիչ գինով,
մեկ արքային նայեց, մեկ՝ թագին, մեկ՝ իրեն.
«Հիմարություն և է,-փնթփնթաց,-թագը տիրել,
թագը՝ թակարդ, թագակրին գերի շինող:
Աստված գիտի՝ չի՞ փորձում Բուն՝ ով տիրանա,
ով տիրանա, էլ խոսք չկա, հիմար է նա:
Ստրուկների, իշխանաց հետ՝ վերի, վարի,
նստել վեճի, քեֆի սեղան ու վեր կացել,
ուրախ-վիատ ԼՈՎ այսքանն եմ ես հասկացել.
ՇԱ՛Տ ԵՆ ԼԱՎԻՑ, ՇԱ՛Տ ԵՆ ՎԱՏԵՐԸ ԱՇԽԱՐՀԻ:
Թե ՉԱՐՆ ինչ է, ունեմ պատասխան, իսկ ԲԱՐԻՆ
Ի՞ՆՉ է հարցին անճարակ եմ փաստ վկայել:
Մտածում ենք, նոր ենք գործում, ու չկա էլ
ուրիշ խորհուրդ մահկանացվիս ճանապարհին:
Ինձնից առաջ են կռահել, ո՛վ թագակիր,
նախքան թագը, քո մի ակը ակնաբնից
հանես պիտի, քանզի առ արթնություն քնից

տիրում է քեզ էրոսը քո քմայքով իր:
Գիրը ճակտիս ո՞վ է գրել, ո՞վ է ջնջում,
կուզի նա թագ, ում միտքն է փակ: Օ՛, ի՞նչ է թագ,
ամենամեծ թագն՝ ամենամեծ տառապանք,-
Բիանտեսը թագի վրա է քրքջում:-
Օրհնյալ է, միշտ էլ գերեվար եմ իր գինուն,
գինով գլուխն ի՞նչ գործ ունի այս թագի տակ,
օրհնյալ է միշտ իմ արվեստի պսակը տաք,
չէ՛, վաղ թե ուշ թագն ինձ կդարձնի խեղկատակ»:



Վերջում արքան ասաց. «Քիլոնը¹ թող խոսի»:
Քիլոնն հարգով. «Ո՛վ թագավոր, երկնքի տակ
չեմ գտնում ես ավելի մեծ տուրք ու տուգանք,
քանի Ջևար, ասածի պես Եգոպոսի¹,
ջուր է ծեծում ցածից վերև ու վերից՝ ցած
զլորելու հիմար ջանաց հորձանքն ընկած,
այս թագին ի՞նչ հանդգնությամբ ձեռք պարզեմ ես:
Գրքեր, երգեր, ունկիս անքուն խոսքեր բազում
իմաստնությունն են քրքրում՝ ի՞նչ հասկանաս՝
կա՞՞ ճշմարիտն՝ անաս, հանապազ մեզ անհաս,-
ձայնով զնգուն մտքիս ունկին այս են ասում,
խորին խորհուրդ՝ միշտ կասկածի դուռը բախել,
Հավատի ու Գյուտի վրա հեզնանք մաղել:
Կասկածն ինքն է՝ այս Քիլոնի կերպարանքով,
կասկածում եմ, նախ ինքս՝ ես կամ, թե՞ չկամ,
կան, թե՞ չկան ամենայն ինչ ու ոչինչ, կամ
կա, թե՞ չկա այս թագն արդյոք, աչքերս՝ փակ,
ու թե ինձ թագադրեմ տենչիս կամքով փառքի,
թառամելու եմ սեփական սովերիս տակ:
Ինչը ես չեմ, այն էլ ինձնից է սկսվում:
Իմ Էվրիկան՝ երկու բառեր՝ ԾԱՆԻՐ ԶՔԵԶ,
այլ բան քեզնից առաջ չփորձես հասկանալ,
լույս-պտուղը մութ-թփի տակ է սսկվում:
Ունկնդիր եմ, ասենք, կանչ ու ձայնին մարմնիս,

ասենք, գիտեմ ցավն ու վայելքներն իր չնչին,
բայց լռությունն է տերն հոգուս ամեն կանչի,
այդպես արթնությունս էլ նման է հենց քնիս:
Ծանր մի մութ է հոգևոր կեսիս վրա,
անաս մի բան, հիմա զգվում եմ այս թագից,
ի՞նչ է զգվանքն ելնող ընդերքիս հատակից,
ու իր նման քանի՛-քանի լուրջ կատակից
իր պես քանի՛ նման բաներ տանջում են ինձ,
տանջվում եմ, ու փակն է մնում ԵՄԻՍ վրա:
Լո՛ւյս մուսաներ, հանգով ունկիս գնգուն երգե՛ք,
ես լավ գիտեմ, որ տենչից մեծ է տիրելու
Վախը՝ արդեն տիրած թագը կորցնելու,
թագն իմը չէ, ու ես թագինը չեմ երբեք»:



Արքան արմանք-գարմանքի մեջ թալկած, թախծոտ,
աչքը սառած թագին՝ թառած եռոտանուն.
«Եվ ոչ մեկը թագ չէք ուզում,-տված տանուլ,-
ասել է, Յոթն իմաստուններ ինձ բաղձալի:
Մտաց կուլիսն այս է բացում և հավաստում՝
մտքով հասուն իմաստունին թագ չի սագում,
իմաստունն այդ տղմաջրի մեջ չի սուզվում:
Թե իմաստուն, հաստատ վստահ է այս փաստում,
կնճռաճակատ գլխից մազերն են հեռանում,
իմաստունի գլուխը թագն ի՞նչ է անում»:
Յոթով, սակայն, չշոյվելով արարքն իրենց
փառաբանող գովքի խոսքով թագավորի,
յոթ հայացքներ՝ երախտիքի շնչով խորին
թագավորին դարձան, խոսքը շեշտով տիրեց.
«Իմաստունն է ամեն անգամ իմաստունի
դեմ դուռ բացում, տգետը միշտ քենի բոցում
իմաստունին երբեք իմաստուն չի կոչում:
Իմաստունը ամեն տեղ մի իմաստ ունի՝
խելք փնտրում է իրենից դեն: Տգետն՝ ամեն
ինչ ես գիտեմ, ինձնից գիտուն ես չգիտեմ»:

Ձայնեցին՝ արքա՛, դու՛ կոթող, մենք՝ շուք քո դեմ,
թե մեկը կա թագին արժան, այդ դու ես մեն,
վերցրո՛ւ, արքա՛, աջ և ահյակ մի՛ նայիր: Կենտ
իմաստունը թե կա այստեղ, դու ես կրկին,
տիրի՛ր թագը, այս տանջանքից մեզ էլ փրկի՛ր,
ՄԵՆՔ ՉԵՆՔ ԱՌՆՈՒՄ,

ԴՈՒ ՏԱԼԻՍ ԵՍ, ԻՄԱՍՏՈՒՆ ԽԵՆԹ»:



Խոսեց արքան. «Թագ, թե՞ անաս մի պատուհաս,
թե առ այստեղ տենչանք էր զեղ իմ ընդերքում,
այսուհետև երազներիս խաս երկնքում
չեմ մտածի ձեռքս հանկարծ պարզել թագին,
պիտի որ ինքս ինձ ճանաչեմ ու կատակին
չտամ երբեք: Նիրհուն էի, ներհուն դարձա:
Օրհնյալ Քիլոն. ԾԱՆԻ՛Ր ՉՔԵՉ, բայց հեզ մեղքիս
ինչպես տեսնեմ ես իմ Վախի ու Ամոթի,
Կրքի, Սեռի ու Ջզվանքի խեղդող ճեղքից,
Հափշտակման ու մեծ Ցավի... Մոլոր մեղքիս
ինչպե՞ս տեսնեմ խորքում երկնքի թեժ տոթի:
Հետո՛ Ստույզն Անհեթեթով է խանգարվում,
հիմարին ի՞նչ, խելացին է խելագարվում:
Պահը դարին ինչպե՞ս տիրի տանջանքի դեմ,
ոռնացող շունը գուշակո՞ւմ է արդյոք մահ,
թե՞ ոռնոցն է մահը հրապուրող հմա:
Ամենից շուտ թե ի՞նչ եմ, ինքս չգիտեմ:
Ես չգիտեմ, ինչ են ԳԻՏԵՄ ու ՉԳԻՏԵՄ:
Ասեմ՝ ոչինչ ես չգիտեմ, սուտ է, արդեն
մի բան գիտեմ, ստի ելումուտ է արդեն:
Մրգի՞ց կորիզ, կորիզի՞ց միրգ,-ոնց էլ գոցվեմ,
Նորը հին է, Սկիզբը՝ վերջ, Խորքը՝ անտես,
ոչ մի պատասխանս ոչ մի հարց չքանդեց,
էլ ո՞նց տիրեմ թագն ու իմաստնապետ կոչվեմ:
Թե խորագետ կանգնեմ Բարու ու Չարի դեմ,
էլի տգետ եմ ԱՄԵՆԱԳԵՏ բառի դեմ:

Խելք-հանելուկ ով քիչ ունի, կարծում է շատ,
ոչ մի հիմար չի բողոքել խելքի քչից,
խելքից խորհելիս զարկվում եմ միշտ պատեպատ,
չունեցողն է շատախոսում, ով շատ ունի, խոսում է քիչ:
Մի բան գիտեմ. ամեն ինչ՝ հարց իմ մտքի դեմ:
Իրոք, ի՞նչ է ԳԻՏԵՄ բառի խորքը, մի տես,
այս աշխարհում ոչինչ չկա, էլ ինչ գիտես,
թե կա, անտես, տեսանելին կեղծ է շողում,
իմաստը՝ հունդ, հավերժ քնած գաղտնյաց հողում,
ճանաչածդ ուժ չունես, որ արտահայտես,
ու ես աստվորիս թնջուկի դեմ՝ թնջուկ,
խաբող-ննջուն հարցերն անհատակ են: Ի դեպ,
ինչքան շատ եմ իմաստնության շունչը շնչում,
կասկած չկա, այնքան շատ եմ ես իմանում:
Բայց մոռանում, մտահանում եմ այնքան շատ,
ինչքան շատ եմ ես իմանում: Էլ ի՞նչ «գիտեմ»:
Եվ սա ի՞նչ է. ինչ շղարշով էլ որ պատեմ –
նույն ճյուղին են ծաղկում ԳԻՏԵՄ ու ՉԳԻՏԵՄ:
Աստված հուշի՝ թռչող նետն հասնո՞ւմ է, արդյոք,
իր թիրախին, կամ Աքիլլեսը՝ Կրիային:
Իմ ՉԳԻՏԵՄ բառի մեջ էլ միշտ իր գահին
ԳԻՏԵՄՆ էլի հանելուկ է մի անողոք:
Մարմին, թե՞ ցուք-հարց ընթացքի ու դարձի դեմ,
սովեստական՝ ինչ դու չես կորցրել, ունես:
Այս թագն ունե՞մ, քանզի այն չեմ կորցրել ես
(Սողոմոնի հետ կորցնողը թե ինքս չեմ),
վերստին հարց է պատասխանն իմ հարցի դեմ:
Բայց կորցրել եմ թագն այս՝ արքայական
թագ ու գահին գայթակղությունս տալով,
իր ստվերում մեղք ու թողությունս լալով,
կորցնում եմ անդարձ կենաց ճոխ ծառը այն
(գուցե և ծառը ստույգ չէ՝ ստվերն ինչքան):
Թագ կորցնող անարժանը ես եմ, որ կամ,
Շեղջ չէ մի հատը ցորյանի, ոչ էլ հատեր
երկու-երեք: Ու քանի՞ հատն է դառնում շեղջ:
Եղծվում է լավը, ինչքան ողջ ու անեղծ
պահենք: Քաղհանելով էլ միշտ աճող վատեր:

Խոսքն ու լեզուն ակնադբյուրն են խաբեության,
բայց խոսքերը, թե՞ հենց, իրոք, մենք ենք ստում:
Ապրիլի մեկ: Ճիշտն ու Սուտը՝ Հարց անհատնում:
Ի՞նչ իմանամ, ԵՐԲ ՈՐ ԻՄ ԵՍԸ ՀԵՆՑ ԻՐ ՏԱՆ
ՄԵՋ ԱՆՏԵՐ Է, իսկությունը՝ խորքում մթան:
Կա ստույգը. Գաբրիելի ձեռքով բացվող
դռան ճեղքից է գեթ մի պահ աչքիս ի տես¹,
այն էլ արդեն նկարելու ճար չունեմ ես,
ու այն դռնով ես՝ այլևս ետ չդարձող:
Գիտեմ... Բայց ի՞նչ, ինչքա՞ն և որտեղի՞ց գիտեմ:
Զգայնություն, Թափանցումիս ճիգ-ճանկերով,
Ճանաչումի իմ ճանաչված ու անճանաչ ջեռ ջանքերով,
սակայն ճի՞շտ են որսում նրանք, ճի՞շտ թարգմանում...
Ու թե հանկարծ ստի կածանով են տանում,
իմ բացածներն էլ գոցված ու փակ են իմ դեմ:
Ու իմ առջև բողբոջի պես աչք է բացում
իմացության մեկ ուրիշ բառ՝ ՆԵՐԻՄԱՅՈՒՄ,
որ աչքիս տեղ ընդունում է աչքի խաղն իմ,
ընդունում է կանչն ականջիս՝ ականջիս տեղ,
այտիս կարմրելն է տեսնում իմաստով զեղ,
հեռագգաց, կռահող լացն ու ծիծաղը իմ...
Այսքանից ետ էլ ի՞նչ գյուտի լույս է աճում,
ի՞նչ ճանաչում, երբ ինքս ինձ չեմ ճանաչում»:



Թեժ հայտնություն. Միներվայի Բուն վերստին
մագիլները՝ թագին, երկու աչքերը՝ շեղ,
նայեց դաժան ու ահարկու, նայեց ահեղ.
«Տիրի տգետն ու աշխարհը տա կորստին՝
բերի Պանդորայից՝ պեղած հուր ու հեղեղ՝
դժոխք պեղած տիեզերական աղետով զեղ:
Թագը՝ արնոտ: Թագը՝ պատիժ: Թագը՝ տանջանք:
Հոգիդ տվող, բայց անհարիր՝ կյանքն առանց թագ...»:
Մինչ կոնչում էր ահեղ Բուն խոսքով իր փակ,
երկնչումով Ութ դարձած Յոթն՝ ունկ իր կոչին,
հասցրեցին մեկ-մեկ փետուր նրա պոչից

պոկել՝ որպէս հուռութ Միներվայի պահի,
որով իրենց վերացումի ծիրում պահեն,
կրակի տան թեժ արբունքի պահին եռման,
կիզվող փետրի կանչով տեսիլ գա Միներվան,
ու իմաստուն թռչնից թալիսմանը շահեն՝
ահեղ հարցի դեմ պատասխան ու վերձանեն
այն շնորհված, կրկին խլված թագի ճամփան:
Ժեռ կոհնչով Միներվայի Բուն թագը այն
ճանկեց եռոտանուց, երկինք թռավ կրկին,
կորցրեց երկնում, որ վերստին մնա գրքին
հեքիաթը իր՝ իր փոխարեն վերհուշի ձայն.
«Արդ աստղային հեռուներն եմ ես նետելու,
ու իր վրա՝ իր անեծքը խորախորոց.
ԹՈՂ ՆԱ ՀԱՍՆԻ, ՈՎ ՈՒՆԻ ԹԵՎ, ԲԱՅՑ ՉՈՒՆԻ ՊՈՉ,
թող նա հասնի՝ Գլխի, Թևի ջանացն հլու»:



Թափուր եռոտանու առջև՝ մեծ հոգոցի
շնչով լցված՝ Ութ դարձած Յոթ շվար-շփոթ,
մառ մտքերով, ճակատները կնճռոտ, ամպոտ,
պաղ մտորում են՝ հաղագս Թևի, Պոչի:
Իրենք այնտեղ, ես այստեղ եմ խորհում եռուն՝
ինչո՞ւ չկա Դելֆյան կաճառի՝ կողն ի վեր
այն ութերորդ իմաստունի անունը դեռ,
ու մտքերս բառի պղպջակ են բերում.
«Այդ վասնզի թագավորի թագն անողոք
գլխին բազմած մտքի վրա՝ կապ ու շղթա,
խանգարել է, որ նա իմաստուն տիտղոսվի,
ու գիտունը ինչ խույրով ու թագով օծվի,
մեռնող քանքարին իր չկա դեղ ու ամոք:
Թագն՝ իր ներքո խելոք գլուխ չհանդուրժող,
խելքգլուխը թագի դեմ ե՞րբ է խոնարհվել,
թագը գլխին՝ իրոք թարփ ու թակարդ անել,
թագակիրը՝ միշտ էլ թագի առջև ծնկող:
Եվ այդ արքա իմաստունի ձիրքը ստվել,
չի ճանկովել անունը կաճառի կողին,

այդպէս անվերջ անհայտ, տրված բարձիթողի,
թագն իր գլխի՝ բախտի վրա շուք ու ստվեր:
Ութ իմաստուն, ճշտված թիվ, ութ իմաստուն,
բայց չի բացվում գաղտնիքների կոկոնը թաց,
գաղտնյաց գանձի առեղծվածի մութը անանց,
ու հին հանելուկին իր նորն է հաստվում:
Օ՛րբոնոս²... Երբ անցան ութ գիտուններն այն,
խառնվելով իրար ոգով խորհրդատես,
Ութն իրար հետ դարձան հարբած մի Սոկրատես¹
լույս հոգու պէս կորցրած մարմինները իրենց:
Լայնաճակատ մի Սոկրատես, մերժող ոգի,
Մեֆիստոֆել, որ ծիծաղով աշխարհ եկավ,
հորդաց Ութի բախտին հանց ծիծաղի սելավ.
«Ութիդ անխորք խաղին ծիծաղն է փրփրում:
Դուք, մի հոգի դարձած, թագից հրաժարվում,
ճիշտն ասեք, ի՞նչ է ձեր ամեն ճիգ ու ջանքի
իմաստն, ու ի՞նչը՝ ձեր կենաց տառապանքի,
ձեր տանջանքի վրա իմ հեզնանքն է վառվում:
Իմաստո՞ւն է, հարց է դեռ մեծ, նա, ով կտրուկ
չի ուզում թագ, ու կեղծիք է խաղը հլու,
ո՞վ է, ում երբեք չի տիրում ԿԻՐՔՆ ԻՇԽԵԼՈՒ:
Դեռ ձեր հոգու միգում դարձեք հարց, փնտրտուք
և ունկնդրում ներքին ձայնին, որ այդ թագից
վախենում եք, ամաչում եք, զզվում և այլ
կաշկանդումի ընդերքյան փակ կրակ ու փայլ,
որ խախտվում են հաղթ իսկության գույներ ու գիծ:
Սատանայի մերժող ոգուն անվերջ արթուն՝
այդպէս ձեզ միշտ սպանելով են ծնել ինձ:
Դուք ինչ-որ բան գիտեք Դայմոնից² ոգելից:
Ձեր գրածներն ես հայելու մեջ եմ կարդում:
Ձեզ կապում է խոսքը խաբուկ Բու թռչունի.
«ԹՈՂ ՆԱ ՀԱՄՆԻ, ՈՎ ՈՒՆԻ ԹԵՎ,

ԲԱՅՑ ՉՈՒՆԻ ՊՈՉ»,

մեկին կատակ է սա ու մեկին՝ լուրջ հոգոց,
առանց Պոչի թագին ձգտողն հնար չունի...
Ես մեծ Պոչով եմ նկարում իմ Գերմարդուն,
որ պիտի գա, շատ տեսնելուց աչքը վառվի,

կուրանա ու իր մեծ խելքից խելագարվի:-
Ով Պոչ չունի... Հարցի վրա հարց է բարդվում:
Եվ ո՞վ է նա, Տերն իմանա, թե ով է նա:
Պոչ չունեցողին ճար չկա՝ թն ունենա,
երբ Թևերը քնած լոկ Պոչով են զարթնում:
Պոչը... Դե, ի՞նչ ասեմ, Պոչը կատակ հո չի՞,
ով Պոչ չունի, կպցնում են այն ամեն հեղ,
սա էլ հենց այդ Բու թռչունի կատակն է գոց,
թռչողն ինչպե՞ս, ո՞ւր է թռչելու առանց Պոչ,
ու դառնում է խուրը խթան... Ի՞նչ հասկանա:
Այսպես հենց Պոչ կպցնելով ուղիղ թե շեղ,
Թև ենք տալիս անթևին, Ջանք և Ուժ ճախրի,
Ուղղություն կա, նան սլացք ուժով ծաղրի,
և սկսվում է թռիչքը մութ ու լուսեղ.
կարևորն ինքը՝ Թռիչքն է, Հասնելը չէ...
Ես դիվական քրքիջ եմ, սատանայի ծիծաղ...
Պոչի մեջ են երգ ու ընդերք, ամեն խորոց՝
մեր աչքերին փակ ու անհաս, մտքի դեմ՝ գոց:
Պոչ եք կոչում, բայց գլուխը իր ձեռքում՝ խաղ:
Գլուխ է պետք, որ հասկանա, թե Պոչն ինչ է:
Թերուսությունն ինքն է արդեն արթուն ու հորդ,
երբ կոչում եք ու համարում Պոչն ավելորդ:
Ճանաչում եք Գլուխ, Թև, Սիրտ, իսկ Պոչը՝ ոչ,
ո՞, մեր մարմնով մեր Գլխի հետ կշռվող Պոչ:
Պոչը՝ հավքի ուղին ծրող ու դեկը իր,
ինքն է ձկան լող-ընթացքի գաղտնիքն անմեկ
ափեր հանող՝ Գլխի մտքով չանցած երբեք:
Աքլորի խաս Պոչի մասին ի՞նքդ դատիր,
Պոչը՝ խելահաս Աղվեսի վկա ու փաստ,
Շան պոչն ասես, դու հազար էլ կաղապար դիր,
չենթարկվող, կաղապարից ետ՝ հին ձևում իր:
Ու խոհեմ Տերը կտրում, որ արթուն, զգաստ
լինի: Կտրելն այդ կտտել՝ է, թե լավ դիտես,
ու կտավածքի խորքում՝ փլված աստվածահաստ:
Սիրամարգը պերճաշքեղ հանց հանցավոր,
որպես տեսիլ, Պոչով է իր՝ իր պերճ փառքում,
իսկ Մողեսի փոքրիկ Պոչիկն անառարկում

բախտի հուռութի ու մոգումի խորհուրդ է հար,
որ Մարմինն ու Գլուխը իր կորցրած կրկին
գալարվում է՝ բա ես էլ ո՞ւմ դեկավարեմ:
Իսկ Օձը, որ ողջությամբ Պոչ է, ի՞նչ ճառեմ,
գերթուլությամբ հող-Եվային դարձրեց կին...
Մեր Պոչն անտես, մեր Ագին Պոչ է բուրբից
անտես նարոտ անճառ հյուսված գույներով հոծ
կրքի կծիկ ու թուլության գլուխգործոց...
Մենք էլ Գլխով ենք երդվում, բայց Պոչով՝ չէ,
երբ գրքերում էլ անթարգման կրքերը մեր
ճառագում են Պոչի խավար ընդերքն ի վեր:
Կրքերն ուժեղ, թուլությունները մեր Պոչ են,
մեր հաճույքները՝ մեզ դարձնող միշտ խոցելի,
մեր Պոչի մեջ՝ մեր Վախ, Ամոթ, անգոցելի
Ծնելու ու Սպանելու ձայները ջեռ:
Փսիխեան² ու մեր Էրոսը³ անվերջ եռփին,
մեր անգուսպ Լացն ու Ծիծաղը անկասելի,
մեր Նարցիսը⁴, Բաքոսը⁵, Խանդն, Օնանն⁶ էլի
մեր ՍՄԴԻՉՄԻ, ՄՍԶՈԽԻՉՄԻ կիզուն կրքին
տվողն ինքն է՝ էլի քմայքը այդ Պոչի:
Պոչն է հենց իր ձեռամբ երգել ժեստերը ծով՝
Էդիպոսից՝ մինչև դաժան Կարամազով²:
Մերն ու Սեռը էլի՝ խաղն են շվայտ Պոչի,
Ե՛վ Օթելլո, և՛ Մակբեթ, և՛ Լիր անձկալի,
և՛ Համլետ, և՛ Դոն Կիխոտ, և՛ Դոն ժուան,
Զևս ու Իոն՝ անտիկ վրձինների ու այն
նորագույնը՝ Ֆրոյդից³ Սարտր⁴ ու Դալի⁴:
Անտես Պոչի հույժ անհեթեթ ոգու ջանքով
Հաճույքն ինքն է մեզ անգոյից առ գոյ հանել,
նույն Հաճույքն է մեզ սպանում կամ սպանել
է կրքերով անտես Պոչի կերպարանքով:
Պոչ: Իր խորքում հանց ակերակ աճում է հիր
Անհեթեթը՝ մեզ տնօրեն երկրից եթեր,
թե երբևէ հագնեն հոգնած թևերը մեր
առ Միներվայի թագ տանող գորեղ գրգիռ,
Պոչն է տալու, նա՝ ամենայն ճախր ու թրթիռ
տվող, առանց որի մեր ամեն ինչ աճյո՛ւն է, դի՛ :

Պոչը՝ մեր դեկն անտես՝ զորեղ ձեռքերում այն
զիտակցության շերտերի տակ անհաս Ուժի,
որ մղում է մեզ առ այնտեղ, որտեղ ուզի՝
շեղած Գլխի աղուր-կածանից ամենայն:
Սատանայի դեսպանատուն՝ դատողության
ծալքերի տակ ու շնորհը մեր թողության:
Չզիտեմ, որ ես չզիտեմ ու չզիտեմ,
որ ես գիտեմ, կոչեք հիմար, քնած ու թյուր,
կոչեք հրաշածին, կոչեք ինձ տիրատուր,-
գիտեմ, որ ես գիտեմ, գիտեմ, որ չզիտեմ:
Ու այդ ԳԻՏԵՄ-ՉԳԻՏԵՄԸ՝ ցանց ահարկու,
հասցնում է ինձ մշտական ծուղակի դեմ,
անտակ լաբիրինթի մուտքի մեծ թակի դեմ
մի աճալարար. Քիլոնն է իր բառով երկու.
«Ծանի՛ր զքեզ» - մոտեցի՛ր քեզ, քեզ ճանաչի՛ր:
Բայց ո՞վ եմ ես, որ այդքան հեշտ ինձ ճանաչեմ,
գուցե աստղերն իմ քայլերով են շարժվում,
գուցե մեկն ինձ պահում է՝ հանց մեղու կամ շուն,
ամենամեծ հարցը թե կա, ես եմ իմ դեմ:
Ինձ ճանաչեմ... Բայց ինձ ինչպե՞ս դառնամ հասու,
երբ չեն զգում իմ բուրմուքը ռունգերը իմ,
երբ ճիշտ չեն լսում ձայնը իմ ունկերը իմ,
երբ իմ աչքերով դեմքն իմ անգամ չեմ տեսնում:
Նա, ով գնում է, ինքն իր ընդերքը մտնում,
իրեն փնտրողը դառնում է մահախոսն իր,
իր քայլերով ընթացք է առ շիրմափոսն իր,
իրեն փնտրողը իր մեջ իր մահն է գտնում,
ինքնագյուտի լույսով միշտ աչքերը մթնում:
«Ծանի՛ր զքեզ, մոտեցի՛ր քեզ, քեզ ճանաչի՛ր»...
Բայց ու բայցեր...
«Բայց ինքն իրեն ճանաչողը դահիճն է իր»:



Ու դու չկաս: (Բայց ՉԿԱ բառը կա՞ իրոք:)
Իսկ այն ո՞վ է, որ չի տեսնում թագն այդ երբեք,

քո եզակին հոգնակի է, քո եսը՝ մենք,
որ գնում ենք մենք մեզ սպանելու սիրով:-
Քեզ հասու է թագն այդ՝ Միներվայի գրով,
դու քո խորքում հրաբուխներ պիտի խեղդես
ծխում անտես, որ խեղդելով խեղդում է քեզ՝
քո սեփական Պոչը քո հատելու ծրով:
Ինքնաձգտամար մենք մեզ...

Մահվան ճամփա բանանք:

Մա էլ՝ կորիզ երգի մրգամսում իմ այս,
կամ անիմաստ, օ՛, անիմաստ Կենաց իմաստ.
ՄԵՆՔ ՋԱՆՈՒՄ ԵՆՔ ՄԵՉ ՃԱՆԱՉԵԼ,
ՈՐ... ՄԱՀԱՆԱՆՔ: